Հրդեհից հետո վերակառուցման ժամանակավոր ուղեցույց
Ինչպես ձեռք բերել «Ջրի հասանելության մասին նամակ»

Հունվարի 01, 2025

Շրջակա Միջավայր և Առողջություն

Հրդեհի կամ բնական աղետի հետևանքով վնասված տունը վերակառուցելու համար դուք պետք է ստանաք «Ջրի հասանելիության մասին նամակ» Հանրային Առողջության Վարչության Խմելու ջրի ծրագրից: Տան սեփականատերերը կարող են ցույց տալ, որ իրենք ունեն խմելու ջրի պատշաճ աղբյուր՝ բավարարելով երեք պայմաններից **մեկը**՝ հանրային ջրամատակարարման համակարգից սպասարկում, սեփականության վրա գտնվող ջրհոր կամ խմելու ջրի ձեռքբերում խմելու ջուր փոխադրող մեքենայից:

Հանրային ջրամատակարարման համակարգի կողմից մատակարավող ջուր

Եթե ձեր բնակավայրին ջուր է մատակարարվել հանրային ջրամատակարարման համակարգի միջոցով, կարող եք ձեռք բերել «Ջրի հասանելիության մասին նամակ» (“Water Availability Letter”)՝ ներկայացնելով հետևյալ երկուսից մեկը.

- Ջրամատակարարման վարձավճարի անդորրագիր ջրային համակարգից, որը ցույց է տալիս ծառայությունը մինչև հրդեհի կամ աղետի ամսաթիվը:
- Ջրամատակարարման համակարգից «Հետագայում մատակարարելու մասին նամակ» (“Will Serve Letter”)՝ **իրենց տարբերանշանով**, որը ցույց է տալիս, որ ջրային համակարգն ունի բավարար ջուր՝ բնակավայրը սպասարկելու համար:

Տնային ջրհորից ձեռք բերվող ջուր

Եթե ձեր սեփականությունում ջրհոր կա, ապա **առաջին քայլն է** պարզել, թե արդյոք ջրհորի մասերից որևէ մեկը վնասվել է հրդեհի կամ բնական աղետի հետևանքով: Վնասը գնահատելուց և ջրհորի կամ դրա մասերի վերանորոգումն ավարտելուց հետո՝ մինչև էլեկտրական լարերը պոմպին նորից միացնելը, **Խմելու ջրի ծրագրին (Drinking Water Program)** ներկայացրեք **«Ջրհորի վերօգտագործման դիմում» (“Application for Well Reuse”)**: Խմելու ջրի ծրագիրը կգնահատի դիմումը և կտա համաձայնություն՝ դիմելու Շինարարության և Անվտանգության (Building and Safety) Վարչությանը՝ պոմպը էներգիայի աղբյուրին նորից միացնելու թույլտվություն ստանալու համար: Պոմպը նորից միացնելուց հետո կարող է անհրաժեշտ լինել ջրհորի ելքի փորձարկում՝ պարզելու համար, թե արդյոք անհրաժեշտ են ջրի պահեստավորման բաքեր:

Վնասված լինելու հանավանկանություն ունեցող ջրհորի անվտանգության գնահատում

- Ստուգեք՝ արդյոք վնասվել են ջրհորի գլխիկը և սարքավորումները (ջրհորի տնակ, ջրհորի պատյան, պոմպ, էլեկտրական լարեր և միակցիչներ, ճնշման բաքեր, խողովակաշարեր, ախտահանման սարքավորումներ, պահեստավորման բաքեր և սալաքար):
- Եթե ջրհորի գլխիկը կամ սարքերը վնասված են, թող դրանք ստուգի և վերանորգումն ավարտի արտոնագրություն ունեցող կապալառուն: Եթե ջրհորի պատյանը վնասված է, վերանորոգումը պետք է անի արտոնագրություն ունեցող ջրհոր փորողը, և պահանջվում է **«Ջրհորի թույլտվության դիմում» (“Application for Well Permit”)**: Այս պահին նորից **մի միացրեք** էլեկտրականությունը ջրհորի պոմպին:
- Վերանորոգման ավարտից հետո ներկայացրեք **«Ջրհորի վերօգտագործման դիմում»**, ինչպես նաև նկարներ և ինքնագնահատման արդյունքները:
- «Ջրհորի վերօգտագործման դիմումի» հաստատումից հետո անհրաժեշտության դեպքում ձեռք բերեք Շինարարության և Անվտանգության Վարչության թույլտվություններ՝ ջրհորում էլեկտրաէներգիան վերականգնելու համար: Երբ էլեկտրաէներգիան վերականգնվի, պատշաճ կերպով ախտահանեք ջրհորը (տես «Ջրհորի ախտահանման ուղեցույցը»):
- Հանրային Առողջության Վարչությունը (DPH) խորհուրդ է տալիս ընդհանուր կոլիֆորմի մանրէաբանական թեստ անցկացնել վավերացված լաբորատորիայի կողմից՝ համոզվելու համար, որ ամբողջ աղտոտվածությունը վերացվել է:

Նշում: Եթե ջրհորը խիստ վնասված է, այն պետք է պատշաճ կերպով քանդվի, և պետք է կառուցվի նոր ջրհոր՝

համաձայն Կալիֆորնիայի՝ Ջրհորների ներկայիս չափորոշիչների: Հավելյալ տեղեկությունների համար կապ հաստատեք **Խմելու ջրի ծրագրի** հետ **(626) 430-5420** հեռախոսահամարով:

Որոշում՝ արդյոք անհրաժեշտ է ջրի պահեստավորման բաք

Հանրային Առողջության Վարչությունը (DPH) պահանջում է խմելու ջրի բաք տեղադրել միայն այն դեպքում, եթե ջրհորն ունի րոպեում 3 գալոնից պակաս (gpm) արտամղում: 2 gpm-ից (գալ./րոպից) ավել, բայց 3 gpm-ից պակաս ջրհորը պահանջում է 1500 գալոն տարողությամբ խմելու ջրի պահեստավորման բաք:

Եթե ձեր գույքը գտնվում է ջրամատակարարման ծառայության կողմից չսպասարկվող տարածքում, և չկան հրդեհային հիդրանտներ, հավանաբար **Հրշեջ Վարչությունը** ջրի բաք կպահանջի հրդեհաշիջման աշխատանքների համար: Հրշեջ վարչությունը դեռ որոշում է, թե արդյոք թույլ կտա կենցաղային ջրերն օգտագործել որպես հրդեհը մարելու համար անհրաժեշտ ջուրը, կամ կթույլատրի բաքեր, որոնք համապատասխանում են ինչպես Հրշեջ Վարչության, այնպես էլ Հանրային Առողջության Վարչության՝ չափերին վերաբերող պահանջներին: Եթե ջրի բաք է պահանջվում, Հանրային Առողջության Վարչությունն առաջարկում է.

- Օգտագործել մեկ բաք ինչպես կենցաղային օգտագործման, այնպես էլ հրդեհաշիջման ջրի համար:
- Կենցաղային օգտագործման համար ջուր հանել բաքի վերևից և հրդեհաշիջման ջուր՝ բաքի հատակից: Կենցաղային ջուր հանելու համար խողովակը պետք է տեղադրվի այնպես, որ քաշի միայն վերին 1500 կամ 5000 գալոնը, ինչպես պահանջվում է ջրհորի ելքի արդյունքներով: Սա թույլ չի տա, որ հրդեհաշիջման ջրի հոսքը պակասի կենցաղային ջրի նորմալ օգտագործման պատճառով:
- Տեղադրել ցածր մակարդակի ջրի ազդանշան՝ կենցաղային ջրի պակասի դեպքում ահազանգելու համար:
- Խոշոր բաքերին ավելացնել պոմպ՝ բաքի հատակում ջրի լճացումը կանխելու համար: Լճացած ջրում բակտերիաների աճի հավանականությունն ավելի մեծ է, և կարող է առաջանալ տհաճ համ:
- Օգտագործել ախտահանման համակարգ, եթե բաքը լցնում եք մեքենայով փոխադրվող ջրով կամ օգտագործում եք մեծ բաք: Ընդհանուր ախտահանման համակարգերը օգտագործում են **քլոր, ուլտրամանուշակագույն լույս կամ հակադարձ օսմոզ**:

Դուք կարող եք տեղեկություններ ստանալ ձեր ջրհորի կառուցման վերաբերյալ՝

- **Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջության Վարչություն, Շրջակա Միջավայրի և Առողջության Բաժին (LA DPH-Environmental Health)**
  - Հեռախոս՝ (323) 890-7806
  - Էլ. Հասցե՝ phicor@ph.lacounty.gov
- **Կալիֆորնիայի Ջրային Պաշարների Վարչություն (California Department of Water Resources)**
  Ջրհորի կառուցման հաշվետվություն պահանջելու համար՝
  - Հեռախոս՝ (818) 500-1645 X233
  - Էլ. հասցե: waterdata@water.ca.gov
  - Ջրհորի կառուցման հաշվետվությունը փնտրեք այստեղ՝ www.water.ca.gov:

Խմելի ջուր փոխադրող մեքենաներից մատակարարվող ջուր

«Կալիֆորնիայի Ջրի մասին» օրենսգրքի 106.4-րդ հոդվածն արգելում է նոր բնակելի կառույցի շինարարության թույլտվություն տալ այնտեղ, որտեղ ջրամատակարարումը իրականացվում է մեքենաների միջոցով: Այնուամենայնիվ, բացառություն է արվում այն տների սեփականատերերի համար, ովքեր վերակառուցում են հրդեհի կամ բնական աղետի հետևանքով վնասված կամ ավերված բնակավայրը: «Ջրի հասանելիության մասին նամակ» ստանալու համար տան սեփականատերը պետք է ներկայացնի՝

- Ապացույց, որ բնակարանը սեփականության վրա նախկինում օրինակորեն է կառուցված եղել: Սա կարող է իրականացվել՝ տրամադրելով Շինարարության և Անվտանգության Վարչության (Building and Safety) շինարարական թույլտվությունների բնօրինակների պատճենները կամ կարելի է սա անել Լոս Անջելեսի Շրջանի գնահատողի (LA County Assessor) տարածքի (parcel) մասին տպված տեղեկատվության միջոցով, որտեղ գույքի տեսակը նշված է որպես առանձնատուն և բարեկարգված:
- Ապացույց, որ բնակավայրը վնասվել կամ ավերվել է հրդեհի կամ բնական աղետի հետևանքով: Այս պահանջը կարելի է բավարարել՝ ներկայացնելով տեղեկանք տեղական հրշեջ վարչությունից կամ ձեր ապահովագրական ընկերությունից: Եթե վնասը եղել է հայտարարված արտակարգ իրավիճակի հետևանք, FEMA-ի տեղեկանքը նույնպես ընդունելի է:
- Բնակավայրի ջրի սկզբնական աղբյուրը և հրդեհից առաջ եղած աղբյուրը: Եթե բնակավայրը նախկինում մատակարարվել է ջրհորից, ջրհորը պետք է վերանորոգվի և վերադարձվի շահագործման, նույնիսկ եթե այն

նախքան հրդեհը կամ տարերային աղետը 2 gpm-ից պակաս ջուր է արտամղել: Կարող է թույլտրվել շեղում, եթե տան սեփականատերը կարողանա ցույց տալ, որ ստորերկրյա ջրերի մակարդակը մշտապես ցածր է ջրհորի հատակից: Եթե շեղում է թույլատրվում, ապա ջրհորը պետք է ոչնչացվի՝ համաձայն Կալիֆորնիայի ջրհորի չափորոշիչների: Եթե մինչև հրդեհը կամ բնական աղետը օգտագործվել է մեքենայով բերվող ջուր, տրամադրեք ջուր բերող մատակարարի անդորրագրերի կամ հաշիվ-ապրանքագրերի պատճենները, որոնք ցույց են տալիս, որ սեփականությունը սփասարկվել է:

- «Հետագայում մատակարարելու մասին նամակի» պատճեն կամ սեփականություն համարվող տարածքին ծառայություններ մատուցելու պարտավորության մասին այլ գրավոր հայտարարություն արտոնագիր ունեցող խմելու ջրի փոխադրողի կողմից:
- Տեղանքի նախագիծ, որն ունի Հանրային Առողջության Վարչության՝ Տեղանքի կեղտաջրերի մաքրման ծրագրի կնիքը և մանրամասներ է ներկայացնում բնակարանի, ավտոտնակի և հարակից շինությունների տեղանքի և չափերի մասին, տեղանքի կեղտաջրերի մաքրման համակարգի մասին, Հանրային Առողջության Վարչության կամ Հրշեջ Վարչության պահանջներին համապատասխանող ջրի պահեստավորման բաքերի մասին, դեպքի այս բաքերը տանող հասանելի ուղիների և համակարգն աշխատեցնելու համար լրացուցիչ սարքերի մասին:

Ձեր տան վերակառուցումը

Ձեր տունը վերակառուցելու վերաբերյալ լրացուցիչ պահանջներն իմանալու համար կապ հաստատեք **Շինարարության և Անվտանգության, ինչպես նաև Հրշեջ Վարչությունների** հետ: